ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Տավուշի մարզ ,Լուսաձորի համայնքապետարան
Emailusadzor.tavush@mta.gov.am

ԼՈՒՍԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ 84-Ա

24 սեպտեմբեր 2018թ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը,ՀՀ Տավուշի մազպետի 05 սեպտեմբերի 120-Ա որոշումը,Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լուսաձոր համայնքի վարչական սահմանում գտնվող Վարդան Ասիլբեկի Սարդարյանին պատկանող ծածկագիր /11-034-0105-0003/ 0,66 հա վարելահողի նպատակային նշանակությունը փոխել և տեղափոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության: Վարդան Ասիլբեկի Սարդարյանին պատկանող 0,66 հա վարելահողի արժեքը կազմում է 1115400/մեկ միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր դրամ, իսկ բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,66 հա կազմում է 950400 / ինը հարյուր հիսուն հազար չորս հարյուր / դրամ :

Լուսաձոր համայնքի ղեկավար Վ. Սարդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբեր 2018 թվականի N 85-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝

Որոշում եմ՝

1. Լուսաձոր համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

3) մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը մշակել Լուսաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

4) յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Հայկ Սարդարյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լուսաձոր համայնքի ղեկավար Վ. Սարդարյան